ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ադրիւր 3 ր. (առաքաման 5 ր.) Տարազ—6 ր. (առաքահման 10 ր.) Ադրիւր-Տարազ, պրէմիաներով 10 ր. (առաքահման 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը ետքը թերթից 30 կ., մի թերթից 20 կ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունւում են ամեն լեզուով Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին եւ երես 40 կոպ վերջին երես 25 կ. մանրատառ (պրեսիս) Ըստ առանձին կրկնակի: Չատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութեամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ուղարկներըը կրճատում է, հեռարկում փոփոխութեան և չտպագրածը երեքմերիից պահւում է վերադարձնում:

Ս.Հռիփսիմեան տեսակցութիւն խմբագրի հետ եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12:

—

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մադաթեան փ. տ. № 5 բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից) առ. 10½ ժ. մինչև 2 ր. կէսօրից յետոյ: Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ Tiflis

դեղարւեստական, գրական, գիտական, հասարակական, ֆնճուդատական պատկերազարդ շաբաթաթերթ

№ 6 Կիրակի, փետրուարի 19 Տասնեւեօթերորդ տարի 1906

Շարունակւում է 1906 թ. քաժանորդագրութիւնը

ԱՂՐԻՒՐ

Ադրիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վեհն ու տպնիւր և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Ադրիւրը իր մտագրղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

XXIV մանկական պատկերազարդ ամսագիրը XXIV

ՏԱՐԱԶ

Տարազը Ադրիւրի հասունացած տղաների ընդակցութեան և վշտի արտայայտուն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարդացած, հայրենասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ ունենալ:

XVII և XVII պատկերազարդ շաբաթաթերթ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

(Պուշկինից)

Քարքարոս նկարիչն ճնշ վրձինով
Հաճնարի ստեղծած պատկերն է սեւցնում,
Եւ իր անկանոն, անմիտ նկարով
Նորա երեսը մրոտում, ծածկում:

Բայց ներկըն օսար ձիգ տարիներից
Փշրւում է, թափւում հին թեփի նման.
Հաճնարի ստեղծած պատկերը նորից
Փառնում է շքեղ առաջւայ նման:

Այսպէս էլ անցնում, կոչում են անհետ
Իմ տանջած հոգուց մոլորութիւններ,
Եւ նորոգւում են, վերադառնում յետ
Նախկին օրերի մաքուր պատկերներ:

Յարութիւն Թումանեան

—

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Երբ մեռաւ Նարգիզը, տխրեցին գաշտի ծաղիկները և սկսեցին խնդրել գետից փոխ առ իրանց մի քանի կաթիլ ջուր, նրան ողբալու համար:

—Օ՛,—պատասխանեց գետը—եթէ իմ ջրի բոլոր կաթիլները փոխւէին արցունքներին, այն ժամանակ էլ նրանք չէն բաւականանայիլ, որ ես ինքս ողբամ Նարգիզին. չէ՞ որ սիրո՛ւմ էի նրան:

—Այդ էր պակաս, որ դու չըսիրէիր Նարգիզին,—պատասխանեցին գաշտի ծաղիկները:—Չէ՞ որ նա այնպէս գեղեցիկ էր:

—Մի՞թէ նա գեղեցիկ էր.- հարցրեց գետը:

—Բայց քեզնից աւելի լաւ ոմ գիտէ նրա գեղեցկութիւնը: Ամեն օր, ափից ցած կախւած, նա հրճւում էր տեսնելով, թէ ինչպէս քո ջրերը արտացոլում էին նրա պատկերը...

Ուայլդը լռեց մի վայրկեան, խօսքն ամփոփելու համար:

—Դէհ, իսկ ես,—պատասխանեց գետը,—եթէ սիրում էի նրան, բոլորովին դրա համար չէր. ես սիրում էի նայել, թէ ինչպէս—միշտ նա կախւած էր ջրի վրայ.—նրա աչքերում արտացոլում էին իմ ալրգ ջրերը:

Էօճիկ

Այդ էր պակաս, որ չը սիրէիր Նարգիզին. չէ՞ որ նա այնպէս գեղեցիկ էր...

Նամակ խմբագրութեան

Թիֆլիս, 4 փետրուարի

Հարգոյ պ. խմբագրապետ,

Յանուն ճշմարտութեան և խօսքի ազատութեան խնդրում եմ ձեզ ապագրել ձեր թերթի մօտակայ համարներից մէկում այս հակիրճ նամակս: Մօտ մէկ տարի յառաջ պատրաստուում էինք Տփղիսում հայ Տփխոյ:

Ազատուած էի Գանձակից, որ առաջնորդական փոխանորդի պաշտօն էի վարում: Սերով կ'երթայի այնտեղ նոյն պաշտօնս չարունակելու, ուր սիրով էին տեսնում նաստիս:

Բայց այդպէս չեղաւ: Թեմիս առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը Տփխոյ Մայր եկեղեցու երէցփոխան պ. Աբշակ Բարեանի հետ մէկ տեղ վճռած էին, որ ես Տփխուսում քարոզչութեան պաշտօնով մնամ. վանքի միաբաններն էլ միաձայն դիմումն էին արել պ. Ազէքսանդր Մանթաշեանին, որ իմ ուռճիկս տայ: Նա 3 տարով նշանակած էր իր կողմից 1800 արծաթ: Պաշտօնը սրտիս մօտ էր, ես էլ իմ հաճութիւնը տւի վճռին, առաջնորդին առանձին առանձին:

Իմ նախկին պաշտօնս յանձնելուց առաջ: Ամիսներ անցան և ես պաշտօնի հրաւիրող պաշտօնական դիր չստացայ. բացատրուեցաւ, որ առաջնորդը փոխել է իր միտքը կամ աւելի ճիշտ կը լինի ասել մի դիւանագիտական խաղ է խաղացել:

Ես վկուցի իրերի դրութիւնը վճռաւոր Կաթուղիկոսին, մնալով Տփխուսում գրեթէ սի ամբողջ տարի հիւանդ, դուէ դուռ... քաղցած: Սոիպւած էի մասնաւոր պարագաներով ապրել:

Վճիռը Տփխոյ ժամանից, դժգոհ մնաց գործի ելքից, բայց և այնպէս ինձ ուրիշ պաշտօններ առաջարկեց: Աւաջն ասում է «*վաւ է շուն վինել, քան տան պատիկը*»: Ես այս դէպքում տան պատիկն էի. ես դատ խնդրեցի, բայց ի գուր, Սաթունեան սրբազանը արքեպիսկոպոս էր... Մանրամասնութիւնները չեմ ասում:

Այնուհետև Բեսարաբիոյ սրբազան առաջնորդի ցանկութեամբ վճռաւոր նշանակեց ինձ պաշտօնակ այն թեմի:

Ամիսներով այս առթիւ չարունակ թէը և դէմ լուրեր են հասնում ականջիս թէ ինչու ես Տփխոյսումն եմ և պատրաստ, թէ ինչու չեմ քարոզում ևն:

Նկատադրածս իմ կեանքի հետ կապած իրողութիւնն է, թէ «*ինչումն վէ*» Սաթունեան սրբազանը կարող է բացատրել. որքան չնորհակալ կը լինէի սրբազանից, եթէ այդ բացատրութիւնը տար և իմ լեզուս կապանքներն արձակէր դրանով:

Մի այլ դիւանագիտութիւն էլ արքեպիսկոպոսի կողմից հետևեալն է:

Մօտ օրերս էջմիածնի ս. Սինոդը միաձայն վճռով ինձ քննիչ է նշանակել Տփխոյ ապականած կոնսիստորի գործերը քննելու: Ապականած եմ ասում, որովհետև կոնսիստորի անդամը հրապարակով դող, ապէտ, կաշառակեր է անւանում բոլոր ծառայողներին, որոնք նոյնն են ասում անդամների համար: Տ. Գարեգին արքեպիսկոպոսը մի տարօրինակ պատճառաբանութեամբ ազդեց է վճռին, որ սինոդի վճիռը փոխէ և պատէ իրենց Բենիկ վարդապետի քննութիւնից:

Մի ուրիշ սուտ լուր էլ այժմ է պրպտում, որ ծնունդ է տուել նոյնպէս առաջնորդարանի մթնոլորտից. իբր թէ սուտ է որ Սինօդը ինձ քննիչ է նշանակել, որ ես լրագրերին մոլորեցրել եմ անուղղակի ճանապարհով:

Այդ վարմունքի անունը ընթերցողներին թողնելով, ես միայն դնում եմ այստեղ Սինօդի հրամանի թիւն ու համարը ,,*ի 23 Յունուարի 1906 ամի №95*“, որի պատասխանը սկսուցել եմ Սինօդին:

Բենիկ վարդապետ.

—

Տպագրելով Գեր. հ. Բենիկ վարդապետի նամակը մի քանի կրճատումներով, մենք խորապէս վշտացած ենք, որ երէկւայ երկու լաւ բարեկամների և եղբայրակիցների մէջ (Սրբազան Տ. Գարեգին արքեպիսկոպոսի և հ. Բենիկ վարդապետի) տարաձայնութիւնները հասնում են լրագրական էջերին: Յանուն *ճշմարտութեան և խօսքի ազատութեան*, որով պահանջում է հ. Բենիկ վարդապետը տպագրել իր նամակը,—տպագրում ենք, վերապահելով մեզ *անկողմնապահութիւնը, անաչառութիւնը և էթիքան*, կրճատելով նամակը և չբաւպագրելով նրա մի քանի մասերը: Միաժամանակ հարցնում ենք Վանքի տաճարի երէցփոխ պ. Աբշակ Բարեանին և Վանքի միաբանութեանը՝ *Ինչու հ. Բենիկ վարդապետը էր բարոզիչ: Ինչու նրա անձի վիճակը դուէ.—դուէն ընկնելը Թոլշատրեց Թեմիս սրբազան առաջնորդը եւ իր պերճախօս բարոզիչ վարդապետին էր հրաւիրից պաշտօնն առանձնելու:*

Պարտք ենք համարում յայտնել և այն, որ կոնսիստորի քննիչու գործերը չեն վերաբերում Թեմիս այժմեան սրբազան առաջնորդի օրերին, այլ նրա նախորդների:

Խմբ.

ԽՈՐ ՔՈՒՆ

Հասասանի սիմափեցնող չարժումները քնից զարթեցրին անծայրածիր կայսրութեան բոլոր դասակարգերը, ամենքը բաց արին աչքերը, դիտեցին իրենց Թերութիւնները, կազմեցին ժողովներ, ծրագիրներ իրենց վիճակը բարւոքելու, *համաձայն ժամանակի* տիպողական պահանջների: Միայն հայ հոգևորականութիւնը չարթնացաւ խոր քնից. մինչդեռ հայ եկեղեցու և հոգևորականների դարւոր անչարժութիւնը չատ կարօտ է վերանորոգութեան և անյետաձգելի բարեփոխութեան:

Այս ծննդական ժամանակ նոյն իսկ ռուսաց վերին սահմանի պահպանողական հոգևորականութիւնն էլ պրպտում բարձրացրաւ և չուտով տեղի կունենայ նրա ընդհանրական ժողովը Հռուսաստանի սրտում—Մոսկայում, նեբրած եկեղեցու անհրաժեշտ բարեփոխութիւններին:

Թիֆլիսի հայ քահանաները մի քանի ժողովներ արին և լրագիրները յայտնեցին, որ ձեմարանի ատներ մի հանրապէս են չարտադրել իրենց կարիքների համար. մինչև *ցարդ* կենդանութեան այլ նշաններ չերևացին. դրա մի պատճառն էլ անչուշտ Հռուսաստանի հայերի չփոթած և տանճած դրութիւնն է: Ի վերայ այսր ամենայնի հարկ է և կեանքի ու մահու խնդիր է հայերի համար եկեղեցական բարեփոխութիւնները—ըստ *ֆօրմների*, վասն զի եկեղեցու չուրջն է դեռ միայն պայմանաւորած հայի ազգային գոյութեան առանցքը:

Երկատողով չենք ուզում նշանակել բոլոր բարեփոխութեան կարօտ կետերը, միայն ընդհանուր խօքով կասենք, որ ծեսականութիւնները, ձեականութիւնը և արարողութիւնները խեղել են եկեղեցու աքանչելի, քրիստոնէական հոգին. նախապաշարմունքները կռապաշտական և քրմական ձևերով խճողել են նրան. եկեղեցին այլ ևս չունի դրեթէ քրիստոնէական կրթիչ և պատրաստող ներգործութիւն հայ ժողովրդի վրայ. վասն զի դադարել է խօսել քարոզչութիւնը սուրբ Աւետարանի, իսկ հոգևորականները

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՅԻՒՄ

(Ա. Բեբել)

—

(Սկիզբը Տարազ ։ 5)

Ի խօսքով, չատ ու չատ պատճառներ, որոնք առաջ են գալիս կամ նիւթական պայմաններից, կամ բոլորովին տարբեր, չատ անդամ արւեստական կերպով առաջ բերւած, մտաւոր պահանջներից ու հայեացքներից, ստեղծում են այժմեան ամուսնութեան մէջ այնպիսի դրութիւն, որը չափազանց անտանելի տանջանք է գառնում երկու կողմի համար, որը խորտակիչ ներգործութիւն է ունենում ընտանեկան կեանքի և զաւակների դաստիարակութեան վրայ, որը, ակայն, միևնոյն ժամանակ, անհնարին է դարձնում գործադրելու միակ խելացի միջոցը—փոխադարձ համաձայնութեամբ ազատարձակը, քանի որ դրան արգելք են հանդիսանում դանազան նախապաշարմունքներ: Բարեբաղդաբար սոցիալական հասարակութիւնը չէ կարող ճանաչել ամուսնութեան մէջ այդպիսի տիւր դէպքեր ու արգելքներ, որտեղ էլ նրանք, իբրև բացառութիւն պատահեն, հեչտութեամբ կը վերացուեն: Ամուսնութիւնն, այդ խօսքի իսկական մտքով, մի մասնաւոր պայման է, որ կապում են երկու բոլորովին հաւասար իրաւունքներ ունեցող կողմերը, որը կարող է քանդւել առանց որև է արտաքին արգելքի, հէնց որ մասնակցողների յարաբերութիւնները այդ բանն անհրաժեշտ կը դարձնեն:

Չէ կարելի երևակայել մի աւելի մեծ անբարոյականութիւն, քան թէ այն, երբ երկու մարդիկ, որոնք չեն կարող տանել միմեանց հետ ամբողջ կեանքում:

Դրանից տուժում է ոչ միայն նրանց սեռական բնաւորութիւնը, որն այդ ստիպողական դրութեան մէջ ստանում է ամենավատ յատկութիւնները, այլ և տուժում են բոլոր նրանց չրջապատողները և, մանաւանդ, երեխաները: Ոչ մի բան այնպէս վհասիչ և անբարոյականացուցիչ ներգործութիւն չէ անում երեխաների վրայ, ինչպէս ծնողների ամենօրեայ օրինակը, որոնք յաճ չեն տպրում միմեանց հետ չարունակ, ընդհանրի ներկայութեամբ դիմաւորում են միմեանց յանդիմանութիւններով, ատելութեամբ, կամ թէ մի աւելի վատ կերպով. այդ բանը խախտում է երեխաների յարգանքն ու սէրը դէպի ծնողները և յաճախ դառն երկպառակ պրութիւն է ստեղծում մանկական հոգու մէջ:

Ոչ մի բան աւելի խիստ չէ դատապարտում այն բուրժուական ամուսնութեան ախտոտական բնաւորութիւնը, որը պայմանաւորւած է լինում տնտեսական յարաբերութիւններով, քան թէ այդպիսի կամ նման վիճակները, որոնք (դա չէ կարելի ուրանալ) տեղի են ունենում չատ ամուսնութիւնների մէջ:

Բուրժուա հասարակութիւնը միջոց չի գիտէ և չէ կարող ունենալ իրերի այդպիսի դրութեանն արգելք լինելու համար: Այդ պէտքում էլ բուրժուական խմաւութեան ամենամեծ չափը՝ *թողնել որ կատարեն* է:

Սոցիալական հասարակութեան մէջ ամուսնութիւնն ամենամտքուր յարաբերութիւնն է, որը հաստատում է միայն փոխադարձ հակման հիման վրայ. դա հաւասար իրաւունք ունեցող այն մարդկանց յարաբերութիւնն է, որոնք դաշնակցում են միմեանց յարգելու ուղղութեամբ: Այդպիսի ամուսնութիւնն անհամեմատ աւելի բարոյական հիմք ունի, քան թէ այժմեան ամուսնութիւնների մեծ մասը, քանի որ նրա մէջ մտնում են երկու կողմերը միմեանց պատականելու դիտաւորութեամբ: Սոցիալականի հասարակութեան մէջ չեն կարող լինել,—ինչպէս որ վերադրում են սոցիալիզմին նրա *չարամիտ եւ անիմոհմ* հակառակորդները—այսպէս կոչած «կանանց ընդհանուրին պատկանելու» դրութիւն, որի անունն անգամ ցոյց է տալիս *կնոջ ամօթալի ստորացումը*. ակայն այդպիսի դէպքեր այժմ դոյութիւն ունի մի քանի դասակարգերի համար: Ընդհակառակն, աւելի մեծ իրաւունքով, ինչպէս որ դա հեչտ ապացուցւում է, այժմեան ստիպողական ամուսնութիւնը կարելի է անւանել *անբարոյական* յարաբերութիւն: Ինչքան աննչան է այն ամուսնութիւնների թիւը, որոնց հաստատելու ժամանակ, ներկայում, հաչւի են առնւում կարողութիւնն ու դասակարգը: Ինչքան բազմաթիւ են այն դէպքերը, երբ կինն ամուսնանում է ոչ թէ ալրոյ պատճառով, այլ որովհետև կենսական պայմանները ստիպում են նրան տեսնելու ամուսնութեան մէջ մի *աղքատահոնած տուն*: Ինչպէս չատախոսել են այնպիսի ամուսնութիւնները, որոնց մէջ թագաւորում է այնպէս մեծ տարաձայնութիւն, որ բանը հասնում է մինչև ապահարզանի, որքան էլ դա անբարեյաջող լինելը կնոջ համար:

Աւելի ևս չատախոսել են այն ամուսնութիւնները, որոնց մէջ երկու կողմերն էլ համաձայնւում են բանը չը հասցնելու մինչև «տրապատկային սկանդալի», ի նկատի ունենալով այլ և այլ գործնական չահեր:

Եւ, վերջապէս, ինչքան են լինում այնպիսի ամուսնութիւններ, որոնց մէջ թագաւորում են եթէ ոչ վէճերն ու խռովութիւնները, այլ գոնէ սառն, սովորական կեանքը «*մէկ մէկու կողքի*», որի հետ հաչտւում են, որովհետև այլ կերպ չէ կարելի: Ընտանեկան կեանքի մի լաւ ճանաչողը կարող է այդ բանը հերքել: Եւ այնու ամենայնիւ գնա գտնւում են մարդիկ, որոնք պըրպտում են թէ ամուսնութեան այժմեան ձևը մի ամենալաւ և նպատակայարմար «արբազան» հաստատում է: Վերմանիայում 1873 թւին պրուսական աւթ դատաւորներուս այն դանդատաւոր ամուսինների թիւը, որոնց գործերը հասել էին մինչև քահանային, հաւասարւում էր 7325-ի, որոնցից 2829-ը հաչտեցան, չնորհիւ քահանայի «վատրես յարդարանքի» 1377-ը մնացին անհաչտ, իսկ 1119 գործեր չէին հասել մինչև վերջ:

Այդ թիւերը վերաբերում են միայն մի տարւան և միայն բողոքական ժողովրդին, քանոր կաթոլիկ եկեղեցին, որը բռնում է ժողովրդի ամբողջ մի երրորդ մասը, խստօրէն մերժում է ապահարզանը և չատ կերպով պահանջում է պահպանել արդէն մի անգամ կապւած ամուսնութիւնը: Բացի դրանից ոչ ոք չի հաւատալ, որ քահանայի ձեռքով հաչտւած ամուսիններն իսկապէս հաչտւել են: Վերոյիչեալ տարում տարձայնութիւնները կրկնւել էին 463 դէպքերում, որոնցից 267-ը այսինքն աւելի քան 4/7-ը, ամուսինները մնացել էին անհաչտ և միւս 3377-ի նման, անցել էին դէպի ապահարզանի հանապարհը: Ա՛ս ցոյց է տալիս այժմեան ամուսնութեան բարոյականութիւնը, իսկ քանի հազարաւորներն են խոչ տալիս այդ վերջին քայլից:

(Կը չարունակի)

ՅՈՒՅՑԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Նոյն տեսակ **ՀՈՒՅՑԱՏԵՏՐ**
«ՉՈՒԼՀԱՆԿԵՐ»-ի
հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.: Գիրքէ՝ Ք/ոսիա, Ժուռ-նուրնալ ընթերցողներ ստանան, պատուիրեն Նոթեռնիկ Պետերպուրգի։ 2—3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ե. Ա. Տ.-Պետերբուրգ

Ընդունելութեան ժամերը՝ ամէն օր 9 առաւօտուն մինչեւ 3 կէսօրէ յետոյ։ Ընդունելութեան ժամերուն հիւանդները կրնան դիմել ինչպէս ինծի, նոյնպէս եւ իմ օգնական բժիշկներուս։ Ինծի կրնան դիմել նաեւ հեռաւոր գաւառներէ եւ արտասահմանէ հիւանդները, որոնք ինծի կը գրեն իրենց հիւանդութեան ամբողջ պատմութիւնը, կը նկարագրեն իրենց ախտանշանները եւ կը խնդրեն իմ խորհուրդը։ Ինծի գրելու համար պէտք է ունենալ հետեւեալ տեղեկութիւնները՝ հիւանդին տարիքը, սեռը, ամուսնական դրութիւնը, զբաղումը, ապրելավայրը, հիւանդութեան սկսելու ժամանակը, անոր պատճառները, հիւանդութեան ընթացքը, ինչ եւ ինչ դեղեր գործածած է հիւանդը, ինչ արդիւնք ունեցած են անոնք, ներկայ վիճակը եւ ինչ հարցումներ ունի հիւանդը ինծի ուղղելիք։

Մանիկոնեան տուիծը

ԵՐԴ ԱՒԱՏՅԱՆ

Վէշի երգիչը։

«Եւ գնայը գօրավարն հայոց Վահան Մամիկոնեան... յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց, սգի առնուլ և հանգչիլ առ վայր մի։

Փաւստոս։

Ա.

Փետուր լերան լանջի վերայ
Մի ամրոց կար լարձրացած,
Որի ներքև ծովն էր շաչում
Բերնին փրփուր, կատաղած։

Եւ խփում էր ծովն անընդհատ
Մշտագալար եղերքին,
Հնած, ընկած ափի վերայ
Որոտ հանում դառնապին։

Խոր հառաչով ամբրկում էր
Շաչող քամին հարաւի,
Ծովի ափին կանգ առնելով
Լսում էր երդն ամեհի։

Իսկ այն դալար ափի վերայ
Բարձրանում էր ծեր մայրին,
Խրոխտ ու լուռ, կանգնած մենակ
Դիտում հսկայ տարերքին։

Եւ մայիսեան մի չքնաղ օր
Մի ծեր դուստն ախթագին
Նստեց տխուր այն ծառի տակ
Դէմքը դարձրած ամրոցին։

Ցանցած սրտի հառաչանքով
Նա յարդարեց իր քընար
Եւ լուռ դարկեց անուշ լարին
Ցաւած սրտով վշտահար։

Ալիքների որոտի հետ
Մեղմ քընարը հառաչեց
Եւ լարերի քաղցր ձայնին
Անուշ երգը ձայնակցեց.—

«Դուրս եկ Վահան, դուրս եկ դիւցազն
Քո անառիկ ամրոցից,
Տես ի՞նչ լուրեր քեզ բերել եմ
Մեր արնաներկ աշխարից։

«Ես գալիս եմ այն դաշտերից,
Ուր սար ու ձոր ծխախտին
Վկայ եղան կարիչ մարդու
Սրտի վերջին հառաչին։

«Ես անց կացայ հովիտներից.
Կարմիր արիւնով ողողած,
Տեսայ վարդի թերթը գալուկ
Երեամբ ներկուած ու յօղուած։

«Ո՜, այն դաշտերում միայն հողմն է
Ո՛ր հառաչում է ուժգին,
Ծմակն է մուխ ականջ դնում
Դիշակերի պառանչին։

«Եւ երկնքից շողքը լուսնի
Գալուկ դէմքերն է շոյում
Մեղմիկ քամին դաշտի միջին
Նրանց սև օրն է ողբում։

«Դուրս եկ դիւցազն, դուրս եկ, լսիր —
Խոր են սրտիս վերքերը,
Երդչի սիրտը խիստ է տրխտում
Երբ չէն լսում երգերը»...

Ծեր գուսանը երգը կըտրեց
Կարեց ձայնը քամբիւռի,

Բայց շրոխինչով չ'քաշուեցան
Լայն դոները ամրոցի։

Ձատ սպասեց մեր երգիչը
Նայեց ծովին փոթորկած,
Ապա ելաւ, քնարն առաւ
Եւ հետացաւ վշտացած»...

Բ

Մինչ ծովն ահեղ ափերի մէջ
Միրթ շաչում էր, հառաչում,
Կամ թէ նորից ծափեր տալով՝
Խռպոտ ձայնով շառաչում։

Եւ մինչ հովը դալար հովտում
Ցօղն էր խլում բոյսերից,
Քնած մայրին նոր էր զարթել
Արշալոյսի շողքերից։

Մեծ ծառի տակ նորից նստեց
Այն գուսանը քաղցրաձայն.
Նորից նայեց լուռ ամրոցին
Նորից երգեց բարձրաձայն։—

Վ Ե Ր Ա Ն Տ Ա Ո Ն Ե Ր Ը

Վիլհելմ Բ. Կայսր Գերմանիայի

Փետրուարի 12—ին արծաթէ պսակի առիթով Թիֆլիսում գերմ. հիւպատոսարանն ընդունեց պետական և հասարակական գործիչների շնորհաւորութիւնները Վիլհելմ Բ. կայսեր ամուս. 25 ամեակի առիթով։

—«Գուրս եկ, Վահա՜ն, գուրս եկ պիւցազն
Գուրս եկ ահեղ ամրոցից.
Խեղճ գուսանիս սիրտն է այրւում
Հայրենիքի ցաւերից։

«Էլ ի՞նչ հանգիստ, էլ ի՞նչ խնդում
Երբ ծեր գուսանն է լալիս,
Լսիր նրան, անյաղթ իշխա՜ն,
Թէ ուսկի՞ց է նա գալիս։

«Աւերակ է հայ աշխարհը.
Ձէն աւանները էլ չկա՜ն,
Քարքանդ երկրի խարոյկների
Ծուխն ու հուրն էլ մարեցան։

«Այն ամայի դաշտերի մէջ
Մարդ արարած էլ չկայ,
Սրդուղը քամին տխուր ձայնով,
Մեր սև օրը լոկ կուլայ։

«Անցած փառքի յիշատակը
Հաւատարւից հողի հետ,
Բերդ ու ամրոց և սուրը խորան
Էլ չենք տեսնի այսուհետ։

«Աւեր գարձրեց անգութ ձեռքը
Սիրուն աշխարհն հայրենի,
Եւ կըարիչի ձեռքերն անյաղթ
Փաթթեց շղթան օտարի։

«Էլ չի լսւում ղէնքի շաչիւն
Քարանձաւի մութ կերճից,
Չի որոտում հայ ռազմիկը
Սև ժայռերի բարձրունքից։

«Իսկ ծերանի անթաղ հայը
Երդու շիրիմն է փորում,
Սրտի վերջին ցաւն ու հառաչ
Աւեր երկրին աւանդում։

«Իսկ դու գարձեալ լուռ ես իշխա՜ն,
Առանձնացած ամրոցում,
Հայրենիքի վիշտն ու արցունք
Քո վեհ սիրտը չեն տանջում»

Գ.

Նորից լուեց ծեր գուսանը
Հոգոց հանեց դառնագին,
Արտասուքից իր աչքերը
Գարձրած հսկայ ամրոցին։

Բայց դռները ահեղ բերդի
Զրացւեցան շառաչով,
Հին ամրոցը քուն էր մտել
Քունն էր խորո՜նկ, անվրդո՜վ։

Ապա յողնած այն գուսանը
Մի կողմ դրեց իր քընար,
Աչքը գցած կապոյտ ծովին
Սկսեց նայել միայար։

Հանդարտ հովը ծովի խորքից
Յիշատակներ էր բերում,
Եւ հանգիստը տանջւած սրտի
Նորից յուզում, ւ զմայում։

Իսկ ծփանքները իրար խառնւած
Մեղմիկ ձայնով դիւթական,
Խոր ու հանդարտ հառաչում էր
Ահեղ ծովը Պոնտական։

Եւ ծերունին լուռ ու երկար
Ականջ դրեց այդ ձայնին,
Որ նման էր իր յուսահատ
Այրւած սրտի յոյզերին։

Շատ տարիներ նրա սիրտն էլ
Այդպէս մեղմ էր աղմկում,



Մարտին Լութէր

բողոքական և հիմնադիր աւետարանական եկեղեցւոյ։

Աւգուստինա-Վիկտորիա

Կայսրուհի Գերմանիայի։

Վիլհելմ Բ. կայսրն ընդունելով իր ամուսնութեան 25-ամեակի առիթով, շնորհաւորութիւններ. ճառախօսեց՝ «Ճամաքի և ծովի վրայ պատերազմական ոյժը իմ առաջին և վերջին իդէալը են։ Իսկ Կայսերուհին միշտ լի է ձգտումներով թեթևացնելու վիշտը, կարիքն ու տառապանքը։

Ե՞րբ վիշտը խոր էր, անծայր,
Ինչպէս ծփանքն այն անհուն։

Եւ այս անգամ ծեր գուսանը
Ուղեց հանդչիլ ծառի տակ
Յողնած մարմնով տարածւեցաւ
Երկնքի տակ կապուտակ։

Զեփիւռն էր լոկ, որ անցնում էր
Նրա յողնած ճակատից,
Ծերուկ ծառն էր օրօր երգում
Օրօր երգում թախծալից։

Իսկ մեղմ ծովը բիւր ծփանքով
Անվերջ աղմուկ էր հանում,
Կարծես ծերուկ հայ գուսանի
Անուշ երգերն էր կրկնում։

Խորհրդաւոր լռութեան մէջ
Խաղաղ քընեց ծերունին,
Խոպոպները ուսին թափած
Քնարն ընկած իր կըշտին։

(Կը շարունակի)

Պետ. Մոմոռեանց



Առջառ, Ալաչէն գաւառում։

Նկարագրում ձեռագիր աւետարանից երեսում է, որ եկեղեցին գիւղում կառուցած է Ղուանից Պետրոս կաթողիկոսի հայրապետութեան ժամանակ հայոց Ռ. ձ. Ծ. Է. թուականին։ Դանձասարից մի ժամուայ ճանապարհ, շրջապատած անտառով և անմատչելի ժայռերով։

«Ազգայնոյն» գրատարեներ յայտնում են ազգային զարձի ուշադրութեան, որ ապրիլ փետրուարի 17—ին, երկարատև եւ ծանր հիւանդութենից յետոյ վախճանեց իրանց անմոռանալի ընկեր

Հայրապետ Բաբուրեանցը

Թաղումը տեղի կունենայ, այսօր կիրակի, փետրուարի 19—ին, յետմարկատարութիւնը առաւօտեան ժամը 10—ից, Դանիվսկայա փողոց № 27 Զգրաեէնի Ս. Աստուածածնայ եկեղեցին, իսկ այնտեղից Վ.Նռայի գերեզմանատունը:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Զըղիտենք ուրիշներն ինչպէս, բայց մենք բոլոր տների մէջ առանձին սիրով ենք հանդիպում Վարդանանց օրին: Մի անարդար վերաբերմունք չէ այդ: Կայ որոշ պատճառ. այդ այն է, որ Վարդանանց գործը մեր պատմական անցեալի բացառիկ երեոյթներից մէկն է: Նա համահայկական գործունէութեան ղրօշմ ունի իր վրայ, ուստի և նրա գօրեղ հըմայքը հասկանալի է և բնական: Բոլոր պատմաբանները միահամուռ համաձայնութեամբ պնդում են, որ Վարդանանց պատերազմը հայութեան ամբողջ կեանքում մի չըկրկնուած, եզակի և մի-միակ պատերազմ է: Մենք թոյլ ենք տալիս մեզ առարկել այդ կարծիքի դէմ՝ Վարդանանց իմաստը, բովանդակութիւնը մի քանի խօսքով չհետևելուց յետոյ: Վարդաննանների կռիւը ըստ էութեան տանջուող, մաքառող և հալածուած հայի պատմական ճակատագրի բնորոշ խտացումն է ներկայացնում. հայի բողոքն է դա բռնութեան և կաշկանդիչ կապանքների դէմ. այդ բողոքը երբէք չի սկսել, այսօր չի վերջանալու և անհրաժեշտօրէն կրկնուելու է ապագայում: Եթէ այդպէս է, ապա թոյլ տուէք ենթադրել, որ հայ ժողովրդի կեանքը կազմում է իրենից մի մշտական Վարդանանց պատերազմ, որ անթիւ, անհամար ուղղադաշտեր ունի. ու ահա դրանցից մէկն է միայն Աւարայրի ճակատամարտը, որի մասին խօսք է լինելու այս էջերում: Աւարայրի կռիւը՝ մի նշանակալից պատմական երևոյթ լինելով, ունի ղրկիչ որոշ պատճառներ, որոնց վերածել կարելի է երկուսի.—տնտեսական և իրաւական: Բացատրենք:

Պարսկաստանը՝ ամենատիպիկ բռնապետութիւն անցեալում՝ հայութիւնը ոչնչացնելու, կլանելու դիտաւորութեամբ, մտադրւել էր նրա տնտեսական—նիւթական ոյժը հիմնովին քայքայել՝ բարոյական նուաճման, ստրկացման համար ճանապարհ հարթելու նպատակով, ի հարկէ: Եւ ահա նա որոշ հետևողականութեամբ, սիստեմատիկաբար հայ ժողովրդի կենսական աղբիւրներն է աշխատում չամաքցնել. Հայաստան է ուղարկում անխիղճ, անողորմ սատրապներ, որոնք խիստ դաժան ծրագրով հարկերն են ծանրացնում անվերջօրէն, ձգտում են հայ ժողովուրդը տնտեսապէս իսպառ աղքատացնել, խեղճացնել անհնարին չափերով: Հայութիւնը բաց աչքով տեսնում էր, թէ ինչպէս ինքը դատապարտւած է չամբաքայլ կերպով, դանդաղօրէն սրիւնարամ լինելու սարսափելի վտանգին:

Բայց դրանով սատրապները դեռ չէին բաւականանում: Բարձրագոյն կառավարութիւնից հրահանգներ ստանալով՝ ձեռնամուխ են լինում հայի իրաւունքի, բարոյական շահերի չըջանը: Եւ ահա յօրինւում է՝ ակզնապէս խոյլ, անշշուկ, բայց յետոյ բացարձակ մի հալածանք, մի մարտ այն բոլորի դէմ, ինչ որ հայկական է: Պարսկական արքունիքը հրաման է արձակում՝ փակել հայ դպրոցները, վռնդել այդ նուիրական հաստատութիւններից հայազգի ուսուցիչներին՝ փոխանակելով նրանց պարսիկներով,—փակել եկեղեցիները և հիմնել տգիտութիւն և խաւար տարածող ատրուշաններ, որոնց նման հիմնարկութիւններին հայերը վաղուց հետ, դարեր առաջ էին հրաժեշտ տւել, — հրամայում է գոցել հայ բերանը հայերէն չըխօսելու համար և բանալ մոգերինը՝ պարսկական ոգով դաստիարակելու միտումով...

Այս և սրա նման անհուրա պահանջներ էին անում մեզանից:

Հայութիւնը չէր կարող հանդուրժել այդ բոլորին, նրա համբերութեան բաժակը լցւեց. ու ալաքարի կոչնակը զարկեց ի լուր պարսից կառավարութեան:

Հրապարակ իջան մարտնչողները: Եւ դարմանալի տեսարան: Ամեն մի դասակարգ, իւրաքանչիւր մի սեռ և հասակ այդտեղ էր բերել իր ներկայացուցիչներին: Չլինէին էին և՝ հոգևորականներ, և՝ իշխաններ, և՝ չինականներ, և՝ կանայք, և՝ երեխաներ: Ինչ էր պատահել. այդ ինչպէս է, որ տարբեր շահերի, հակամարտ չարաբերութիւնների կողմնակից տարրերը մի դրօշակի տակ, մի զօրավարի հրամանատարութեամբ և միակերպ ոգեորութեամբ լցւած՝ թիկունք—թիկունքի, ձեռք—ձեռքի տւած՝ ելել էին ասպարէզ գոն բերելու և՝ կեանք, և՝ երջանկութիւն, և հանգիստ: Ըստ երևոյթին ապշելի, բայց իրօք մի բնական մօմենտ էր այդ՝ ահա թէ ինչու. երբ որ անիրաւութիւնը բիրտ, չախչախիչ իր բռունցքն է բարձրացնում իրաւունքի դէմ, սպառնալով ոչնչացնում ամենքի բարեկեցիկ վիճակին, մարդկային արժանաւորութեան և պատւին, այն ժամանակ իրաւունքի ներկայացուցիչները առանց դասակարգի, սեռի և հասակի իսրութեան՝ առժամապէս պայմանաւորելով և հակընթաց շահերի կռիւը դադարեցնելով՝ ոգնամարտ են ելնում պաշտպանելու մարդկային գերագոյն հասկացողութիւնը — ազատութիւն և բարոյական անկախութիւն:

Բուռն, կրակոտ և ուժեղ եղաւ հայերի հակահարւածը: Եւ դա հասկանալի է, եթէ նկատի առնենք, որ հայերը դեռ նոր էին մկրտւել քաղաքակրթութեան աւազանում, տակաւին նոր էր նրանց կուլտուրական ժառանգութեան ստանձնումը, որպէս դի կարելի լինէր մեզմ, թոյլ և անտարբեր վերաբերւել դրան: Նոր էր ստեղծւել ժողովուրդը քաղաքակրթելու միակ նշանակալից միջոցը — դիրն ու գրականութիւնը: Այնպէս որ հայերը դեռ ևս կուլտուրական պատանեկութեան շրջանն էին ապրում, իսկ իւրաքանչիւր քաղաքակրթական պատանեկութիւն միշտ և ամեն տեղ եղել է իր դաղափարական չահերին գիտակ, անչափ խիզախ և ոգեորւած չշմւելու աստիճան:

Բարձր էր ոգեորութիւնը, նոյնքան բարձր էր և պաշտպանելիք դաղափարը: Հողմի, համոզմունքի և նորքին աշխարհի բռնաբարութեան դէմ ըմբոստացող մի համարձակ ոգու հոգեմտյլ թռիչքն էր այդ: Մի թռիչք, որ պատրաստւած էր, վարժ և անիսլամ: Դպրոցական, դաստիարակչական մի ամբողջ սիստեմ երկար տարիներ նպատակ էր դրել իրեն հային ներշնչելու իր ազգայնութեան փրկարար գիտակցութիւնը, համոզելու նրան, որ երջանկութիւնը կուլտուրականութեան մէջ է և ամենամեծ առաքինութիւնը խտւարի, տգիտութեան և բռնակալութեան դէմ յայտարարւած սրբազան կռիւն է:

Բայց ահա յանկարծ անպատկառ յաւակնոտութեամբ պարսկական հրէշաւոր ուժիմը իր ճնշիչ, հոգեսպան պահանջըն է դնում հայութեան ինքնագիտակցութեան առաջ, —Չդիր քո ամբողջ լուսաւորութիւնը, կրկին որդեգրիր խաւարին և մոռացիր դէպի վեր, դէպի առաջ ձգտելու տենդդ, իրաւունքիդ ձայնը խեղդիր կրծքիդ տակ չարտայայտելու պայմանով...

Հայութիւնը չէր կարող համակերպւել այդ անիրաւ պահանջին. նա կանգնած էր բարձր լերան երկնահասակ կատարին և ահա նրան հրաւիրում են դէպի խոր, դէպի ճախճախուտների հեղձուկ, գարշ մթնոլորտը: Ու հայ ժողովուրդը պատմութեան մէջ հազուագիւտ մի վճռակամութեամբ դուրս հւաւ Աւարայրի ճակատամարտի բեմը յաւելնելու համար, թէ կամայականութեան, քմահաճոյքի դէմ պայքարելու պարտքը գիտակցում է:

Նա մենակ էր, իսպառ մենակ: Իր կուլտուրական պատփարագիցերապային հայութիւնը օգնութեան խրախոյս և ոյժ էր խնդրել. բայց Եւրոպան, աւելի ճիշտ նրա պաշտօնական բերանը՝ հայութեան դարերի ակնկալութեանը բանի տեղ չըդնող այդ կեղծ և խարդախ բարեկամը, երես թեքեց հայ դատի պաշտպանութեան գործից ու հայ ժողովուրդը փիզիկապէս ջախջախւեց հինգ անգամ աւելի կուռոյներ ունեցող պարսկական զօրքից: Սակայն պարսիկները բառի բուն իմաստով չը յաղթեցին հային, և չէին էլ կարող. ահա թէ ինչու...—Լիակատար յաղթութիւնն այն է, որ յաղթողը յաղթւածին՝ բանի թէ մեղմիւ՝ ընդունել է տալիս իր պահանջն, անց է կացնում իր ցանկացածը, առաջադրւածը: Պարսից կառավարութիւնն ուզում էր հայ ժողովուրդը սպանել ազգայնապէս պարսկացնել: Եւ դրա համար տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը. բայց վերջինըս ո՛չ այլ ինչ էր, եթէ ոչ հայերի ազգայնական գիտակցութեան աւելի որոշապէս շեշտումն և պարսկական բռնակալութեան խստափուռն իր անհեթեթ ծրագրից: Եւ դա բնական է. այդպէս էլ պիտի լինէր, եթէ նկատի առնենք այն հասարակական-քաղաքական պայմանները, որոնց մէջ ապրում էին պարսիկները. հայութիւնը բարձր էր կանգնած իր կեանքով դրանցից:

Այդպէս է եղել և այսպէս էլ կը լինի. խաւարը չի կարող երբէք վերջնականապէս յաղթել լոյսին: Եւ այս ճշմարտութիւնը՝ ամեն տեղ և ամեն ժամանակ շեշտած՝ լրկնւում է մեր պատմութեան մէջ, յատկապէս Վարդանանց շրջանում, որ մեր պատմական հերոսների ծննդավանն է հանդիսանում. հերոսներ, որոնց մէջ բարձրիզուխ կանգնած է Մամիկոնեան դիւցազնը, անձնուրաց հերոս Վարդանը:

Պատմութիւնը ընդհանրապէս երկու տիպի հերոսներ է ծնել.—աւերիչ և ստեղծագործող: Վարդանը՝ գլուխներից և դիակներից սարեր կանգնեցնող, արեան գետերի և արցունքների ծովի մէջ լողացող արիւնոտ «հերոսներից» չէ, որոնց վրայ անաչառ ներունդները կանգնեցնում են նզովքի և անէծքների արձանը, այլ այն անզուգական, ալտրուիստ և անձնազոհ հերոսներից, որոնցով պարծենալ կարող են երախտապէտ սերունդները՝ գարերի հնութիւնը միշտ թարմացնելով անմոռանալի յիշողութեամբ: Վարդանների յիշատակի վրայ է խարսխւում ազգերի փառքի կոթողները, միշտ վեհ, միշտ ողեորիչ և յաւիտեան պանծալի...

Ա. Տ.

ԼԵԶՈՒ

Եւրոպական առածն ասում է՝ ով քանի լեզու գիտէ, այնքան էլ մարդ է: Բազակրթական յառաջադիմութեան համար անպայման անհրաժեշտ է սիրաոպանել որ և է բարձր լուսաւոր ազգի լեզուն. այդպիսի մի լեզու քաջ իմանալը որչափ կարևոր է գիտնականի, վաճառականի, քաղաքագէտի համար, որչափ կենսական-հարկադրական է պետական լեզուն վարժ իմանալ անհատական և հասարակական չահերի համար. տիրող լեզուն չիմանալը, արհամարհելը յանուկ—որոշ պարագաներում՝ յանցանք է սեպհական օգուտի և չահերի վերաբերմամբ:

Հայերը ի բնէ յայտնի են իրենց սուր ընդունակութիւնով շատ օտար լեզուներ սովորելու. դրան շատ •գնում է այն հանդամանքը, որ հայ լեզուի մէջ կայ աչխարհիս բոլոր լեզուների տառերը — ձայնահնչիւնները, մեր 36 գրի չնորհիւ կարողանում ենք այնպէս տիրապետել մի լեզու, որ զարմացնում է ազգերին: Վենետիկի Մխիթարեան վանքի փոքրիկ միաբանութիւնը հազարաւոր, զանազան ազգերի այցելուների իրաքանչիւրի հետ խօսում են իր լեզուով, վերջապէս աչխարհիս երեսին հայ չը կայ՝ որ մի երկրորդ լեզու էլ չիմանայ, մանաւանդ որ հայն ամեն օտարազգի դրացի ունի:

Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան հայն անհրաժեշտաբար պիտի սովորի պետական լեզուն, այդ երեքից՝ ռուսերէնը բացի քաղաքական կարևորութիւնից՝ նաև լուսաւորութեան միջոց է մեզ համար: Տաճկաստան չի կարելի երևակայել մի հասարակական մարդ հայ—առաջնորդ, յաջորդ, խմբապիր, ուսուցիչ, քահանայ և այլն, որ կարդին տաճկերէն չիմանայ: Բայց ընդհակառակն մենք տեսնում ենք Անդրկովկասում դեռ մինև հիմայ էլ առաջնորդներ, գործակալներ, շատ ուսուցիչներ, որ պետական լեզուն չեն իմանում, որից է հարկէ մեր ազգային չահերը կրում են շատ վնասներ: Այս այնպիսի մի կարևոր և աչքի ընկնող խնդիր է, որ դրա անհրաժեշտութիւնը վաստատելու հարկ չկայ: Այո յիշենք, որ ուսահայ առաջնորդ, յաջորդ, վեղարաւորներից միայն երեքը պիտին ռուսերէն խօսել առանց թարգմանի... Սևանայ վանքում 60 հոգի են, մի հատ ռուսերէն իմացող չկայ, Էմմիածնի, Երևանի, Շուշւայ թեմական դպրոցներն աւարտողները ռուսերէն խօսել չգիտեն, բայց սրանք պատնում են քահանայ, յաջորդ, առաջնորդ....

Սա մեծ պակասութիւն և մեծ վնաս է մեզ համար, ուստի շատ լաւ կըլինէր Մոսկւայի և Պետերբուրգի հայոց հարուստ եկեղեցիների հաչւով մի պանսիոն պահէր մայրաքաղաքում միամեայ կուրսով, ուր գործնական կերպով ուսումնասիրած ուսանողներ, սարկաւագներ, ուսուցիչներ, վարդապետներ, քահանաներ վարժւէին պետական լեզւի մէջ և ի հարկէ կըզարգանային, կըկրթւէին, կաչքարացւէին էլ ամեն կերպ, մի տարի կենալով մայրաքաղաքում: Ամեն տարի քսան հոգի անվճար

պահելով այդ պանսիոնում՝ մեր հասարակական գլխաւոր գործիչների այդ աչքի ընկնող, անպատշաճ թերութեանը կարելի էր բաւական դարման տանել: Հայի համար լեզու սովորելը խաղալիք է, միայն ի հարկէ դրա համար հարկաւոր է յարմարաւոր միջավայր:

Ն. Վ. Տ. Ա-եան:

ՄՈՒՂԱՆ.

Այդ խորհրդաւոր, անծայրածիր տափաստանները, գարնան լեռադիական նիրհից յետոյ՝ կենդանանալու, կամ ինչպէս ներկայիս յարմար է ասել, վերածնելու դանդաղ նշաններ են ցոյց տալիս: Զարնանային Ադդամ աւազակաբարոյ աւանից լայն ու հաստատուն խճուղի է չինւում Մուղանի վերին ծայրով մինչև նրա վերջը, որտեղ է ռուսաց սահմանի հռչակաւոր Խուդափերին հնադարեան կամուրջը, որ մի աքանչելի կերտուածք է համարեա մի ամբողջ տիտանական դէնդւած, որի բոլոր սարերը հաստատուած են մեծ և տնեանի գետի միջից հլած ժայռերի վրայ: Մուղանի հարաւային ծայրով հոսում է Արաքսը, որի ափերին բուսնում է խիտ, անտառի պէս, չատ բարձր ու ղէղ եղեգնուտ, որ կոչւում է չամբ, դաւաւում այդ եղեգները չատ գործածական են խրճիթների, և հիւղերի համար:

Եղեգնուտ չամբի մէջ դանւում են նչանաւոր թռչով վայրի խոզեր, որոնց որսը եկամուտի աղբիւր է տեղացիների համար: Նոր խճուղու երկարութեամբ բաւական եւանդագին կեանք է սկսւել մի քանի տարիներից իվեր. հիմնւում են այդ տեղ Ռուսաստանի ներքին նահանգների դաղթականների գիւղերի չարքեր, որ քիչ կանդ առաւ փաստալ ճակատագրական պատերազմի պատճառով: Դաղթականներն անչափ գոհ են և ուրախ իրենց նոր տեղերից, այստեղի հողը ոսկի է, ասում են նրանք, ձմեռ. չը կայ, առանց ջրելու բուսցնում են հարաւային ռուսիոյ սեխ, ձմերուկ, և այլն. հրաչալի նպհատիկներ են բանում: Եկւորների համար լեռների կողմից գալս են բերւած քանքաններով ընտիր և առատ ջրեր, չինած է ձիրմակ քարից կոփածոյ վառաւոր եկեղեցի, հիւանդանոց, գպրոց. կայ ուսուցիչ և ճեմարանական քահանայ: Կլիման որովհետև ամեներին ճահճային նշոյլ չունի, այլ չոր տաք է, ուստի ամառը ոչ վնասակար է և ոչ անտանելի: Շինած են սիրուն, գողարիկ տներ, կանոնաւոր փողոցներով, բոլորը ծառազարդ: Սրճարաքս են, նարեկները, որոնք մտերմանում են հայերի հետ, միասին վարուցանք և հրաւիրաշ՝ ընկերովի, գործեր են անում, նոր գիւղերի խանութպանները հայեր են, բոլոր ռուսները գինւած են, թէպէտ խիստ գործ են ածում, բայց առայժմ չափազանցութիւն դեռ չի նկատւում, խելացի և աչխատասէր մարդկանց ապաւորութիւն են գործում:

Մի հայ պիօներ ևս վորձել էր բախտը այս աքանչելի բերրի տափաստաններում. նա պաշտօնաթող, պենսիօներ ծառայող էր, լաւ հողեր էր ձեռք բերել այստեղ, սկսել էր չինել քարւանատուն, տներ, խանութներ, դիւղատնտեսութիւն բայց աւազ, եկան թրքական պատերազմի տխուր օրերը, նա ամեն բան ձգեց ռուսներին, ինքը փախաւ Շուշի: Այս ռուս գիւղերի չարքում առ այժմ նշանաւորը է ամենից հին Ղարաբուլաղ՝ 100 տուն ռուս, 200 տուն թուրք, 25 տուն հայ, պօստ-հեռագրատուն, դպրատուն, հիւանդաքոց և ամմակալով երկդասեան դպրոց, որ-

մանի պահակներ, հիւրանոց, քարւանատներ, 400 խանութ, լաւ տներ: Ամեն չորեք չարքի բազմամրոխ վաճառք բազար է լինում, մի օրում առանձնակ հազարների չրջանառութիւն, ծրագրւած է չուտով այս ամանը քաղաք դարձնել, առաջինը Մուղանում: Խճուղին այստեղից մինչև պարսից սահմանը բոլորովին պատրաստ է. հայերի ուշադրութիւնից թող չը խուսափէ Մուղանը:

Յ.

ՇԱԿԱՊԻ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

Փետրւարի 2-ին և 14-ին Տարագի խմբագրատանը կայացան ընդհ. ժողովներ հիմնելու Թիֆլիսում, համաձայն մեր հրաւէրի, գրագիտների Միութիւն *առանց խորութեան ազդութիւնների և քաղաքական դատանանքների*: Առաջին ժողովին ներկայ էին 33, իսկ վերջին-25 հոգի: Մինչև ընդհ. ժողովները, մինչեայն Տարագի միջոցով հրաւէրին, եկել էին մի խումբ մատենագէտներ և հրատարակիչներ որոշելու Միութեան նպատակի թէզիսներն որոշելու: Այս ընդհ. խորհրդակցութեան նախագահ էր ընտրւած գրական եւանդուն գործիչ, Լուսոյ ամսագրի խմբագիր Հ. տ. Գիւտ-աւագ-քահանայ Ադանեանց, և քարտուղար պ. Յարութիւն Թումանեանց: Փետր. 2-ի ընդհ. ժողովը սրանց ընտրեց նոյն պաչտօնների համար, հրաւիրելով զեկավարել ժողովը. չարունակութիւնն էր անցեալ հինգչարթի, փետրւարի 14-ին, որ ազդարկից էր:

Ահա այս մասին է և մեր գիտողութիւնները:

Կազմւում է Մատենագիտների Միութիւն, նպատակը-*Համերաշխութիւն առանց ազդութիւնների և քաղաքական դատանանքների խորութեան կազմել մի ընտանիք*,-և գործի հիմքը դեռ չը դրած, համակրելով դաղափարին. չը գալ, չը մասնակցել նրա իրագործման, որովհետև հրաւէրի տակ ստորագրել է Տէր-Գիւտը, որովհետև ընդհ. ժողովների նախագահը Տէր-Գիւտեան է, այդ մեզ հասկանալի չէ: Մտքերի այս լինչ չփոթութիւն է, նեզսրտութեան այս լինչ փաստեր են: Եւ այս այն հանգամանքում, երբ գրագէտները պիտի կազմեն մի ընտանիք: Ուրեմն մի ընտանիքի անգամներ՝ գինւորական, քահանայ, ինժիներ, բնագէտ արհեստ, վաճառական, բոլորն էլ եղբայրներ, երբեք չը՛ պէտք է համարւեն մի օջախ, նոտեն մի սեղանի շուրջ և իրանց ընտանիքի, օջախի բարօրութեան, պատւի և բարգաւաճման մասին խօսեն, խորհրդակցեն, որովհետև տարբեր ազդութեան են պատկանում:

Ընդունած է մասնաժողով 12 հոգուց Միութեան կանոնագրութիւնը կազմելու համար

Ժամանակագրութիւն

Խուզարկութիւնները Թիֆլիսում և Թէ դաւառներում չարունակւում են չատ եռանդով, բանտերը լիքը են կալանաւորներով, որոնք կասկածելի անձնաւորութիւններ են համարւում, կամ ղէնքեր են ունեցել: Չինովնական չարի չուրջը, Աբծրունու քարւանատան խուզարկիչներին նոյնպէս, սակայն ոչինչ չը գտնւեց:

—Դեներալ նահանգապետները ամեն տեղ ծանր պատասխանատուութեան են ենթարկում նրանց, որոնց մօտ զէնքեր են գտնւում:

—Թէ Թիֆլիսում, Թէ դաւառներում, մանաւանդ հրեղէն քաղաքում, Բաքւում աւազակները մեծ գործ են տեսնում. ամփոփակարգ տներ են մտնում թալանում և անպատիժ հեռանում:

—Վլադատանն ու Խուրիան արեան հետեւողներով միրաւելուց յետոյ հնազանդւել են դեներալ-նահանգապետին, ընդունելով նրա խիստ միջոցներից:

—Կովկասի հայոց բարեդործ. ընկ. կանոնագրութիւնը վերականգնելու նպատակաւ, համաձայն այդ ընկ. հիմնադիր բժշկապետ պ. Բ. Նազարպեկեանի առաջարկութեան, այսօր լինելու է ընդհ. ժողով:

—Պետական խորհրդակցութիւնը թադաւոր- Կայսեր հրովարտակով նչանակւած է սպրիլի 27-ին:

—Վլադատանի էքզարխութիւնը վերացնելու և միայն ազգապետակապութիւններ հաստատելու մասին լուրեր կայ: Սակայն վրացիների պահանջը, անկախ, ազատ եկեղեցի ունենալը դեռ վերջնական որոշում չէ ստացել:

—Մամուլի ղեկավարներին պատւում են կալանքներից և պատասխանատուութիւնից, որն անցնում է տպարանատէրերին. Ուրիշ խօսքերով տպարանատէրն այսուհետև պէտք է լինի և դրաքննիչ, միայն առանց ռօճկի, կամ ուրիշի ճիչոը՝ ռօճիկ պիտի ստանայ խմբագիրներից և միչտ էլ աւանս 3000 ր., որպէսզի տուգանք վճարէ և տպատւի բանից:

Մամուլի չուրջը

Անդրեև, յետոյ գարնանային աունկի պէս բազմանում են հայ թերթերը, կը մաղթենք ստուածային խօսքերով, որ նրանք *բացի բազմանալուց* և աճեն: Սակայն Աստուած մարդուն օրհնելով նախ ասաց՝ *աճեցէք* և ապա *բազմացէք*, իսկ մեր օրերում դեռ միայն բազմանում են: Աստուածային պատգամները քարոզող նոր, կիսամեայ Բարի լուր Բաքւում նոր տարւոց լոյս տեսնող հանդէսն է, որ արամադրում է մեզ Ադամից սկսել և Ամիրխանեանի վրայ կանդ առնել:

Բարի լուր հանդիսի էմբլեմն է՝

Աստւած լոյս է, Աստւած սէր է:

Նոր հանդէսն ստում է, Հ. Տիմոթեոսի բնբանով՝

Ով կամենայ փրկել իր հոգին ծառութեան ու գիտութեան գայ:

Այս ցնտասի տակ հետեւակ ստաչեռդողովն է հրատարակ գալիս Բարի լուրը:

«Մէկ երեսի գեներալ երեկոյեան պատերազմական խորհուրդ ունէր իր օփիցերների հետ: Երբ ժողովից ցրւեց գինւորները հարցրին՝ «մեր գեներալն ի՞նչ է կամենում» և պատասխան ստացան, որ նա կամենում է այս գիշեր բերդն առնել: Այդ վճռին գինւորները պատասխանեցին եթէ որ մեր գեներալն այդ է կամենում, մենք էլ կամենում ենք նրա կամքը կատարել և բերդն առնին:

Մեր Աստուծոյ կամքն է տարածել ճշմարտութեան գիտութիւնը, որ մեղաւորները փրկւեն: Բարի լուրը պէտք է լինի այդ միջոցներից մէկը և մենք պիտի աննենք այն, որ Աստուած կամենում է: Ուրեմն Բարի լուրը բացի Աստուծոյ կամքը իրագործելուց ուրիշ բան չի որոնում:

Նպատակն, ինչպէս տեսնում էք, այնքան պարզ է, որ կոմենտարիաների էլ պէտք չը կայ:

Հանդէսը լոյս է տեսնում մեծադիր տետրներով 16 երես, խմբագիրը հրատարակիչն է պ. Պ. Թառայեանց: Ուրեմն Թառայեանց ֆիրման միաժամանակ երկու թերթ է հրատարակում տարբեր ուղղութեամբ և ծրագրով, Թիֆլիսում մեր Ս. Թառայեանցի Ընկեր չարաթաթերթը և Բաքւում աւետարանականների օրգան Բարի լուրը: Որովհետև մենք ընդհանրից ենք ամեն բարի գործի, ուստի ցանկանում ենք, որ Բարի լուրն էլ բարի բերի հայ ընթերցողին:

—

Փետրւարի 5-ից սկսել է լոյս տեսնել պ. Հայկ Տէր-Աւետարանեանցի խմբագրութեամբ Գիտակ ժողովրդական չարաթաթերթը, որի նպատակն է՝

կրթել հայ պարապատոր դասակարգին, տալով նրան գնով մատչելի մի հրատարակութիւն: Եւ այժմ այդ հրատարակութիւնը լինելու է չարաթական և հասարակութեան քաղաքերութիւնը նրան կարող է դարձնել նոյն իսկ ամենօրեայ:

Նկատի ունենալով, որ խոստացւած ամսաթերթ Մատենագէտը լոյս աչխարհ եկաւ իբրև չարաթաթերթ-Գիտակ, հաւատում ենք, որ չարաթներ չանցած, Գիտակը էլ կը վերափոխւի օրագրի...

Միայն թէ պէտք է ամսպարել, ապա թէ ոչ, այսօր թէ վաղը Ալիքը կըսկսէ ողողել հայ աչխարհը:

Ալիք ամենօրեայ լրագիր օրերս սկսելու է Թիֆլիսում հրատարակել բժչ. պ. Թադէոսեան:

—

Փետրւարի 14-ից վերսկսւեց Նովոյ Օբօզր.լրագիրը, իսկ այսօրւանից և Վօզրոժդենիեն ու մի քանի օրից յետոյ էլ Ն. Թամամչեի հրատարակութեամբ պէտք է լոյս տեսնէ և Վլադեւեos (*Յառաչ*) լրագիրը ռուսերէն լեզուով: Բացի այդ մի չարք նորաներ *սուննկներ* կերևան Թիֆլիսում տեղական բոլոր լեզուներով, որոնց թւում Արզուհիի, Յոյս ևլն:

—

Լուսոյ ամսագրի տասնամեակը լրացաւ այս յունւարին, վերջին, դեկտեմբերի համարը կազմւած է բազմակողմանի: Լուսոյի տասնամեակով կըսկսէ չուտով լոյս տեսնել նոյն խմբագրութեամբ և օր. Նւարդ Ադանեանցի հրատարակութեամբ Հայրենիք ամենօրեայ լրագիրը, երբ արա տպարանը կը բացւի:

Գեղարուեստական frօնիկոն

Օպերային արտիստների միացեալ ընկերակցութեան ներկայացումները ձմեռային սեզոնի վերջին այնքան չաջող էր, որ նրանք չարունակում են և այս մեծապասին ու հրաւիրել են գաստրեօլների մի քանի յայտնի երգիչներ՝ տ. Ն. Ս. Երմօլենկո—Իւժինա, (դրամ. սոպրանո), Պ. Խ. Իւժին (դրամ. տենօր):

Ներկայացնելու են՝ *Հուգենօտներ*, *Հ. իղա*, *Հէրտէր* ևլն: Վաղը երկուշաբթի երգելու է Իշխան Իգոր:

—Վաղուց չը ներկայացւած Շուբաճիկ ողբերգութիւնը ազտիտիկ. ընկ. թատրոնում հայ դերասանական ընկ. ներկայացրեց երկու անդամ:

—Արտիստիկ ընկ. թատրոնում նոր ըստպերտուարով Մէյերխոլդի զեկավարութեամբ ռուս դրամատ. խումբն սկսում է վաղանցից իր ներկայացումները:

—Երաժչտական գործիչների մի նոր ընկերութիւն է հիմնւել Թիֆլիսում. ընկերութիւնն ունենալու է իր գալոցն ու ակումբը: Ընկերութեան նախաձեռնողները են պրօֆ. Մաակովսկի Վ. Ասիլև, ևլն:

Հայ օրիորդ

ուսուցչուհու վկայականով պատրաստում է բոլոր առարկաներից աշակերտներ գիմնազիաների և այլ ուսումնարանների համար մինչև 6—րդ դասարանը:

Հասցէն՝ Տարագի խմբագրութիւն, օր. Շ. 5—1



Ա Ղ Ե Տ Ա Ն Ո Ց Ի Ն

Կերպին ամբիծներ ձանձրացուցիչ ամենայն չափով են պատճառում մարդկանց, որոնք ձգտում են ամեն ինչ իմանալ, բայց ոչ մի բան էլ չեն իմանում.

Ա Ն Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամենայն ինչ, որ ասում է մարդ, ճշմարիտ է, եթե նա ինքն էլ հավատում է իր ասածին.

Ա Ն Ա Ր Տ Ա Հ Ա Ւ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամենայն ինչ, որ մարդ անում է, ճիշտ է, եթե նա ինքն էլ հավատում է իր արածին.

Ա Ն Ա Ր Տ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամենայն ինչ, որ մարդ անում է, ճիշտ է, եթե նա ինքն էլ սիրում է իր արածը.

Ա Ն Ա Ր Տ Ա Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

*Ամենայն ինչ, որ մարդ անում է, ճիշտ է, եթե նա ինքն էլ սիրահարված է իր արածին